ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-44/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.11.2015թ. թիվ 1/73-1/34955-15 գրությամբ ներկայացված «Դավիթշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00455925) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-44/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-44/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 25.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.11.2015թ. թիվ 1/73-1/34955-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Դավիթշին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

2. «Դավիթշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 07.12.2015թ. թիվ 01/04.1/3632-15 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Դավիթշին» ՍՊԸ-ին:

«Դավիթշին» ՍՊԸ-ն 10.12.2015թ. թիվ 10 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 2015թ.-ին ունեցել է 36918487 (երեսունվեց միլիոն ինը հարյուր տասնութ հազար չորս հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ համախառն եկամուտների հանրագումար, սակայն 2015թ. տարեկան բալանսը պետք է կազմվի և ներկայացվի 2016թ.-ի հունվարից հետո:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Ընկերությունը խնդրել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետով, 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 122-րդ կետով ներկայացված պահանջների համաձայն՝ նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտների հանրագումարը համարել իրականացած:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.11.2015թ. թիվ 01/61-231164 գրությամբ հայտնել է, որ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/121» ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.10.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Դավիթշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտների հանրագումար և կից ներկայացրել է Ընթացակարգի անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-37/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 22.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարության

12.11.2015թ. թիվ 1/73-1/34955-15 գրությամբ ներկայացված «Դավիթշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00455925) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-44/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 12.11.2015թ. թիվ 1/73-1/34955-15 գրությամբ ներկայացված «Դավիթշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/121» ծածկագրով բաց ընթացակարգը, որին մասնակցելու նպատակով ***25.10.2015թ.*** հայտ է ներկայացրել «Դավիթշին» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

3. Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 6357440 (վեց միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

4. ՀՀ ֆինանսների նախարարության 03.11.2015թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «Դավիթշին» ՍՊԸ-ի հայտը ներակայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը 2012թ., 2013թ., 2014թ. համար զրոյական է:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-44/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Խորհուրդը՝ ուսումնասիրելով Պատվիրատուի 10.11.2015թ. թիվ 01/61-231164 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 3 տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեզծ տվյալ (մինչև ՀՀ

կառավարության 03.12.2015թ. 1427-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ):

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 6357440 (վեց միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Պատվիրատուն, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով, 27.10.2015թ. առաջին և հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 2012թ., 2013թ., 2014թ. համար զրոյական է:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչած 2015թ. համախառն եկամուտի հանրագումարը հաշվի առնելուն, ապա խորհուրդը գտնում է, որ որպես որակավորման չափանիշ գնահատվում է հայտը ներակայցնելուն ***նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը, տվյալ դեպքում՝ 2012թ., 2013թ., 2014թ.:***

Այսպիսով, ***«Դավիթշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվան (25.10.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը (2012թ., 2013թ., 2014թ.) զրոյական է, մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 6357440 (վեց միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության 12.11.2015թ. թիվ 1/73-1/34955-15 գրությամբ ներկայացված «Դավիթշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00455925) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Դավիթշին» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Դավիթշին» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 3 տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Արման Մնացականյան**

Անդամներ՝ **Հրաչյա Ավետիսյան**

Էդվարդ Գրիգորյան